Լ. Միրիջանյանի անվան հ. 155 հիմնական դպրոց

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Արտադասարանական աշխատանքների կազմակերպումը

<< Կենսաբանություն >> առարկայից

Ուսուցիչ՝ Դավիդյան Լուսինե

Ղեկավար՝ Ծատուրյան Արմեն

ԵՐԵՎԱՆ 2022 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Ներածություն 3
- Հիմնական բովանդակությունը ներկայացնող տեքստ 5
- Գործնական համատեքստ..... 12
- Եզրակացություն 15
- Գրականության ցանկ 18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Երբեմն իրենց մասնագիտական առարկայի մեջ խորացված մարդկանց թվում է , թե ամեն ինչ գիտեն: Սակայն ինչքան խորանում ես առարկայի կամ կյանքի հորձանուտների մեջ, այնքան զգում ես, որ դեռ ավելին պետք է իմանաս:

Ուսումնական յուրաքանչյուր առարկայի գծով նախատեսված գիտելիքների պաշարը չի կարող սահմանափակվել միայն դասարանային աշխատանքով: Տեղին է մեջբերել Լեոնարդո դա Վինչիի խոսքը, թե երկաթը ժանգոտում է իր համար կիրառություն չգտնելով, լճացած ջուրը նեխում կամ ցրտից սառչում, իսկ մարդու միտքը խամրում է՝ կիրառություն չգտնելով: Հանրակրթության էական բարեփոխումը և զարգացումը արդի ժամանակներում անհրաժեշտ են և կարևոր:

Յուրաքանչյուր ուսուցիչ ունի իր ուսերին դրված առաքելություն: Ներկայումս ուսուցչին վերապահվող խնդիրներից մեկը կրթության բովանդակության կազմակերպումն է: Մատուցման նպատակադրումը պետք է լինի գիտելիքների, հմտությունների, վերլուծական մտածողություն և այլ որակների զարգացումը, ոչ թե սոսկ տեղեկատվություն հաղորդելը: Այդ գործընթացում ուսուցիչն աշխատում է խթանել, խրախուսել ու զարգացնել աշակերտների ինքնուրույն և քննադատական մտածողությունը: Հետևաբար, ինչպես նշել է Մակարենկոն « Դաստիարակը պետք է ունենա սանի առողջության պատկերը, միշտ իմանա, թե ինչ ուղղությամբ է շարժվում նրա բնավորությունը, ի՞նչ հետաքրքրություններ ու հակումներ, տաղանդներ և ընդունակություններ ունի նա և ո՞րն է անհրաժեշտ զարգացնել»:

Ուսուցումը կազմակերպելու համար դրվել են հետևյալ նպատակները.

- ուսումնասիրության միջոցով աշակերտի մոտ հետաքրքրություն առաջացնել տվյալ երևույթի հանդեպ,
- շեշտել կենսաբանության առարկան խորապես ուսումնասիրելու անհրաժեշտությունը:

Նպատակին հասնելու համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ խնդիրները.

- մեթոդաբանության ճիշտ ընտրություն,
- թեմայի բարդության աստիճանի, ծավալի ընկալում:

Անհրաժեշտ է ավելացնել, որ աշխատանքն ապարդյուն կլինի, եթե ուսուցման ժամանակ չկիրառվեն մեթոդիկայի ժամանակակից նվաճումները:

ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ << ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ >> ԱՌԱՐԿԱՅԻՑ

Այժմ փորձեմ մի փոքրիկ դաս վարել ինքս , պարզաբանելով կենսաբանություն առարկայից արտադասարանական աշխատանքների մի քանի տարածված ձևերի մասին:

Դասերի հետ մեկտեղ արտադասարանական աշխատանքների կազմակերպումը, ուսումնադաստիարակչական աշխատանքների գլխավոր ձևերից մեկն է: Գաղտնիք չէ, որ աշակերտները դասի ընթացքում հոգնում են բավականին ծավալուն նյութի << չոր >> հաղորդումից, իսկ արտադասարանական աշխատանքների կազմակերպումը ճանաչողական հետաքրքրություն կտա աշակերտին << կենսաբանություն >> գիտության նկատմամբ : Հիմնական խնդիրը, որ ծառացած է կենսաբանության ուսուցիչների ուսերին , առաջին հերթին ուսումնադաստիարակչական գործընթացի որակյալ կազմակերպումն է, որն ուղղված է << կենսաբանություն >> գիտության լեզվի տիրապետմամանը:

Գոյություն ունի 3 գործոն, որը ստիպում է աշակերտներին սովորել.

- Հնազանդություն
  - Հնազանդությունը դրդում է / մղում է/
- Հետաքրքրություն
  - Հետաքրքրությունն իր արտահայտությունն է գտնում նրա ամբողջ գործունեության բազմազան տեսակներում: Հետաքրքրությունը այնպիսի նպատակասլաց գործունեություն է, որի ընթացքում զարգանում է հարցասիրությունը, մտածողական ակտիվությունը: Հետաքրքրությունը տանում է դեպի նպատակը :
- Նպատակ
  - Նպատակը գրավում է, նպատակների լուծման արդյունավետությունը առավելապես պայմանավորված է տարվող աշխատանքներով: Ցանկացած ուսուցչի նպատակն է հետաքրքրել աշակերտին իր առարկայով:

Արտադասարանական աշխատանքը կարող է բարձրացնել ուսուցման գործընթացի արդյունավետությունը, որի հիմնական նպատակն է ծրագրային հարցերի, ինչպես նաև

հարցերի, որոնք չեն մտնում ուսումնական ծրագրի մեջ, բայց հասանելի են աշակերտների ըմբռմանը, խորացված յուրացման ընթացքում գտնել և զարգացնել աշակերտների կարողությունները և հմտությունները: Արտադասարանական աշխատանքների բազմապիսի ձևերի օգտագործումը հնարավորություն է տալիս ուսուցիչներին ապահովելու արդյունավետ ուսուցում:

Հիշենք, որ դասավանդելն ու ուսուցանելը իրարից տարբեր գործընթացներ են:

Ժամանակակից դասավանդման և ուսուցման միջև առկա են որոշ պարադոքսներ.

- Ուսուցումը մի բարդ և ակտիվ գործընթաց է, որը տեղի է ունենում սովորողի ներսում:
- Կատարել ուսուցանողի պարտականությունը, որը կոչվում է §դասավանդել¦, չի նշանակում սովորողին փոխանցել բովանդակությունը՝ առաջնորդվելով ուսումնական ծրագրով և աչքի անցկացնելով դպրոցական դասագրքերը: Ուսուցումը չի առաջանում աշակերտների համար ինչ- որ թեմա պատմելով կամ դասահարցումով:
- Աշակերտները այնքան կարիք չունեն գիտելիքների և տեղեկությունների, որքան մտածողության , տեղեկությունների մշակման և համագործակցային հմտությունների, ինչը նրանց թույլ կտա գոյատևել ապագա՝ արագ փոխվող աշխարհում:
- Ուսուցչի դերը փոփոխության ընթացքում է, և նոր դերը լի է մարտահրավերներով: Այն ավելի շուտ նման է առաջնորդի դերին , երբ ուղղորդում է սովորող համայնքին և դասարանում ստեղծում համագործակցության ու ակտիվության դրսևորման բարենպաստ միջավայր:
- Ուսուցումն ընկալվում է որպես նախկին և նոր գիտելիքի կամ հմտությունների կապող գործընթաց: Այն տեղի է ունենում միայն այն դեպքում , երբ գիտելիքը կամ հմտությունները օգտագործվում են և փոխվում է մարդու վարքագիծը:

Ուսուցման գործընթացի արդյունավեությունը շատ բանով կախված է աշակերտների ճանաչողական հետաքրքրությաուններից, նրանց ուսումնական գործունեության ճիշտ կազմակերպումից:

Շատ փորձագետներ և գիտնականներ փորձել են պարզել և բնութագրել , թե ինչ բաղադրիչներից է կազմված արդյունավետ ուսուցումը: Արդյունքում ստացվել է այսպիսի պատկեր.

- ✓ ունի ինքնակարգավորող բնույթ
- ✓ նպատակային է
- ✓ բովանդակային և իրավիճակային է
- ✓ կառուցողական է
- ✓ աճող է
- ✓ համագործակցային է

Եթե լավ ուսուցումը դիտարկում ենք որպես կառուցողականություն, ամբողջականություն, համագործակցություն և ինքնակարգավորում ձևավորող գործողություն, ապա բնական է ենթադրել, որ լավ ուսուցումը պահանջում է, որ ուսուցման նպատակները ընդունելի լինեն աշակերտների կողմից: Քանի որ աշակերտների փորձն ու կանխակալ կարծիքներն տարբեր են , հետևաբար բոլորը չեն կարող սովորել նույն ձևով : Ահա թե ինչու ուսուցչի ամենակարևոր դերը այնպիսի միջավայի ստեղծումն է, որտեղ աշակերտի համար հնարավորություն է ստեղծվում սովորել իր նախկին փորձից կամ գիտելիքից, լինել գիտելիքի ակտիվ մշակող և տեսնել նոր տեղեկությունների իրական և իմաստալի բովանդակությունը:

Դպրոցներում տարվող աշխատանքները, օգտագործվող մեթոդներն ու նյութերը պետք է նպաստեն այս հմտությունների ձևավորմանը, զարգացմանն ու ամրապնդմանը: Ուսուցման պրոցեսում սովորողների ճանաչողական հետաքրքրություններն արթնացնելու, ամրապնդելու և զարգացնելու ուսուցչի վարպետությունը կայանում է իր առարկայի բովանդակությունը հարուստ, խորը, գրավիչ, իսկ սովորողների ճանաչողական եղանակները բազմազան ստեղծագործական արդյունավետ և գործնականորեն համոզիչ դարձնելու կարողության մեջ: Ուսուցիչը հնարավորություն ունի պրոֆկողմնորոշման աշխատանքը ընդլայնել արտադասարանական տարբեր միջոցառումներում՝ արտադասարանական էքսկուրսիաներում , թեմատիկ երեկոներում, կոնֆերանսներում:

Ուսուցիչների ստեղծագործական որոնումները պետք է ուղղված լինեն այն բանին, որպեսզի օգտագործվի սովորողների թե ուսումնական , թե արտադասարանական գործունեությունների միասնությունը: Ինչպես ուսուցման գործընթացը, այնպես էլ սովորողների արտադասարանական գործունեությունը պետք է առավելագույն չափով հագեցած լինի բազմաբնույթ ինքնուրույն ստեղծագործական աշխատանքներով, որոնք սովորողներին

հրահրեն գիտելիքներով գործառնելու և որոնելու դրված նպատակի իրագործման նոր, ավելի կատարելագործված ուղիներ, որոնք զարգացնում են նրանց ոչ միայն մտածողական, այլև կամային ջանքերը:

Լինելով դասագործընթացի օրգանական շարունակությունը կարևոր է՝

- ✓ Արտադասարանական աշխատանքների առաջին իսկ պարապմունքների ժամանակ արդարացնել աշակերտների սպասումները, չհանգցնել կենսաբանության նկատմամբ սկզբնական հետաքրքրության կայծը, այլ որքան հնարավոր է այն վառ պահել՝ ամուր հիմքեր ստեղծել ճանաչողական հետաքրքրությունների համար:
- ✓ Արտադասարանական աշխատանքները պետք է հիմնվեն գիտելիքի և ճանաչողական կառուցվածքների վրա: Դրանք կարող են կրել ֆորմալ կամ ոչ ֆորմալ բնույթ:
- ✓ Արտադասարանական աշխատանքը տանել հետևողականորեն, նպատակաուղղված, որոշակի սիստեմով և միտված խորքային ու հիմնավոր գիտելիքի ձևավորմանը:
- ✓ Արթնացնել դպրոցականների բարոյական, գեղագիտական զգացմունքները:
- ✓ Ստեղծել ինտելեկտուալ /մտավոր / ուղղվածություն՝ երեխաներին առաջարկվող ցանկացած գործ պետք է կրի մտավոր գրավիչ և ոչ հեշտ խնդրի համար բոլոր ուժերը պահանջող, խելացի բնույթ:

Իմ կարծիքով եթե այս նպատակները հստակ ձևակերպվեն և տեղ գտնեն ուսուցչի առջև դրված կրթական և դաստիարակչական խնդիրների՝ անելիքների « ակտիվում» , ապա վստահորեն կարելի է ասել , որ ուսուցման արդյունքը առավել բավարարող կամ բազմանպատակային կլինի: Ներկայացված նպատակների իրագործման արդյունքում հնարավոր կլինի նաև ընդհանուր գրագիտության ու զարգացվածության մակարդակի բարձրացումը, ուսուցման և ուսումնառության գործընթացի արժևորման գիտակցության զարգացումը, ինչը ամենակարևորն է ճանաչողության զարգացման գործընթացում:

Արտադասարանական աշխատանքները կազմակերպելիս խստիվ հաշվի են առնվում սովորողների առարկայական ու ընդհանուր զարգացման մակարդակը և ծրագրային նյութը հաղորդում այնպիսի ընդգրկմամբ ու ձևով , որ հետաքրքիր է դառնում , այլ ոչ թե ձանձրույթ պատճառում աշակերտներին: Այդ նպատակով նաև ուշադրություն են դարձնում, որ թեմայի ուսուցման ժամանակ ոչ միայն խորացվեն աշակերտների գիտելիքները այդ թեմայից, այլև բացահայտվեն նրանց անծանոթ ու նոր առանձնահատկությունները: Այդ իսկ

պատճառով արտադասարանական աշխատանքներում ծրագրային նյութը պարզաբանելիս , վարպետ ուսուցիչները հիշատակում են ոչ միայն դասագրքում եղած հանրահայտ տեղեկությունները, այլև նյութի խորացումը ապահովելու նպատակով տարբեր սկզբնաղբյուրներից ծանոթացնում այդ գիտությունների ուղղությամբ վերջին տարիներին կատարած հետազոտությունները, այսինքն սովորողներին զինում ոչ միայն ուսումնական այլև համաուսումնական կարողություններով, ունակություններով, ձևավորում նրանց մեծ ճանաչողական, որոնողական աշխատանք կատարելու կարողություններ, հմտություններ: Արտադասարանական աշխատանքի արդյունավետ պլանավորումն ու կազմակերպումը հնարավորություն կտա կենսաբանության ուսուցչին ավելի պարզ կերպով տեսնել ու ուսումնասիրել սովորողների ճանաչողական հետաքրքրությունների ուղղությունը, խորությունն ու կայունությունը և նպատակասլաց կերպով զարգացնել դրանք:

Արտադասարանական աշխատանքները պայմաններ է ստեղծում սովորողների հետազոտական աշխատանքների կազմակերման համար: Արտադասարանական պարապունքներն օգնում են դաստիարակել էկոլոգիական մշակույթ,պատասխանատու վերաբերմունք բնությանը: Սովորողների էկոլոգիական մշակույթի ձևավորման մեթոդական միջոց է հանձնարարությունների համակարգը, որ ներառում է բնության պահպանության պահանջի և անձնական կարիքների, բնությունից մարդու և հասարակության ակնկալիքների ճիշտ զուգորդումը, բնական պայմանների և պաշարների պահպանման ու օգտագործման ձևերի, օրենքների, նորմերի, նպատակների և արժեքների հիմնավորումը:

Արտադասարանական աշխատանքները այնքանով են էական, որ աշակերտները լրացուցիչ գիտելիքներ են ստանում, զարգացնում ստեղծագործական ունակությունները, օգտագործում՝ ժամանակակից նոր տեխնոլոգիաներ, զարգացնում հաղորդակցական հմտություններ, դաստիարակում, ձևավորում գեղագիտական ճաշակ, ընդլայնում մտահորիզոնը, կատարում հետազոտական աշխատանքներ:

Դպրոցներում արտադասարանական աշխատանքների տարածված ձևերից են՝

- ✓ Առարկայական խմբակներ
  - Այսօր արտադասարանական խմբակի լիարժեքությունը պետք է մեծ նախադրյալներ ստեղծի առարկայի ուսուցման գործընթացի բարելավման գործում:

Աշակերտներին ներգրավել առարկայական խմբակում ՝ դա նշանակում է զգալի չափով նպաստել նրա ճանաչողական հետաքրքրության զարգացմանը:

Անմիջական դերն է.

- Հարստացնել աշակերտների տեսական գիտելիքները, գիտելիքների խորացումը:
- Փորձ, դիտումներ կատարելու ժամանակ ինքնուրույն որոնողական գործունեության ձևավորում:
- Աշակերտների ստեղծագործական ուժերի զարգացումը, գիտելիքների, գիտության նկատմամբ հետաքրքրությունների զարգացումը:
- Զարգացնել աշակերտների գիտական, տրամաբանական մտածողությունը, դատողություններ, վերլուծություններ , որոշումներ կայացնելու կատարելու կարողությունները:
- Ստեղծել օլիմպիական ռեզերվներ:

✓ Սեմինար պարապմունքներ

- Շատ ուսուցիչներ արտադասարանական աշխատանքները անց են կացնում սեմինարական տիպի պարապմունքների միջոցով: Սեմինարները նախատեսվում է այս կամ այն առարկան խորապես ուսումնասիրելու համար: Նպաստում է կարևոր թեմաների ուսումնասիրմանը: Քննարկվում է 2-3 հարցեր, որին սովորողները պատրաստվում են նախապես, օգտագործելով հատուկ գրականություն՝ սկզբնաղբյուրներ, պարբերական մամուլի նյութեր: Լինում է նաև հետազոտական բնույթի, քննարկվում են սովորողների ուսումնական հետազոտությունների արդյունքները՝ հաղորդումները, զեկուցումները, ռեֆերատները: Այս հարցում ուսուցիչը օգնում է սովորողներին: Նա ղեկավարում է քննարկումը, ելույթ է ունենում ղեկավարող խոսքով:

✓ Կոնֆերանսներ

- Կոնֆերանսները որպես կանոն նվիրվում են դասընթացի որևէ ընդհանրացնող թեմայի կամ առաջատար պրոբլեմի: Ուստի այն աղբյուրների շրջանակը, որն օգտագործում են այստեղ սովորողները, ավելի լայն է, քան սեմինար պարապմունքների

ժամանակ։ Հաճախ կոնֆերանսներն անց են կացվում ընդլայնված լսարանում՝ զուգահեռ կամ կից դասարանների մացնակցությամբ։

- ✓ Կոնսուլտացիաներ
  - Կոնսուլտացիաների ժամանակ բացատրվում են աշակերտների մոտ դժվարություններ կամ խորացված հետաքրքրություն ներկայացնող հարցերը։ Դրան համապատասխան կառուցվում է կոնսուլտացիաների մեթոդիկան։ Որոշ ուսուցիչներ կոնսուլտավիաների համար հատկացնում են հատուկ օր շաբաթվա մեջ։
- ✓ Էքսկուրսիաներ
  - Էքսկուրսիան պահանջում է մեծ և լուրջ նախապատրաստական աշխատանք։ Էքսկուրսիաները նախապատրաստելու և անցկացնելու ընթացքում պետք է ներկայացնել էքսկուրսիայի նպատակը, աշակերտներին ծանոթացնել օբյեկտին։ Ուսուցիչը որոշակի առաջադրանքներ է տալիս դպրոցականներին, ապահովում էքսկուրսիայի կապը դասընթացի նյութի և խնդիրների հետ։ Էքկուրսիայից հետո ուսուցիչը անցկացնում է զրույց, որի միջոցով ստացված տվյալները շաղկապում են ավելի վաղ յուրացրաժի հետ, տալիս են ցուցումներ, թե ինչպես նյութը մշակել։ Երբեմն էքսկուրսիաների նյութերով կազմակերպվում են ցուցահանդեսներ, անցկացվում երեկոներ։
- ✓ Ֆակուլտատիվ աշխատանքներ
  - Ֆակուլտատիվ աշխատանքների գլխավոր նպատակը աշակերտների գիտելիքների ընդլայնումն է։

Կարևոր եմ համարում արտադասարանական աշխատանքի կենսաբանական էքսկուրսիաների անցկացման մեթոդիկան, սովորողների էկոլոգիական մշակույթի ձևավորումը։ Այն գործընթաց է, որը հնարավորություն է տալիս մարդուն ճանաչելու, հասկանալու, գնահատելու շրջապատի փոխհարաբերությունները։ Շատ կարևոր է արտադասարանական պարապմունքների դաստիարակչական ուղղվածությունը։

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

Ներկայացնեմ իմ աշխատանքի պայմաններում.

Հատուկ ուշադրություն եմ դարձրել դասարանական եւ արտադասարանական տարբեր տեսակի աշխատանքների կազմակերպման արդյունավետությանը (դասեր, էքսկուրսիաներ, խաղեր, վիկտորինաներ եւ այլն), որոնք անցկացվել են թե՛ ինքնուրույն, թե՛ ամառային էկոլոգիական արշավների ժամանակ:

Բերեմ մեկ դրվագ.

Այցելություն << Կարին գյուղ>> - ի տնկարան:

Նպատակն է՝ ուսուցման մեթոդով սովորողների մոտ զարգացնել սովորել սովորելու կարողունակությունը և նպաստել ստեղծագործ մտածողության զարգացմանը, ինչպես նաև առարկայի նկատմամբ հետաքրքրության մեծացմանը:

Նախապատրաստական փուլում մեզ շատ էր աջակցում <<Հայաստան ծառատուն >> ծրագիրը, որին մենք դիմել էինք խորհրդատվություն ստանալու նպատակով: << Հայաստան ծառատունկ >> ծրագրին մեր դպրոցը մասնակցում է 2006 թ.- ի ապրիլից: Ծրագիրը հենց սկզբից ոգևորել է մեզ, որովհետև այն նախատեսում է ոչ միայն դասավանդումը արդյունավետ կազմակերպելու մեխանիզմների ուսուցում, այլև տրամադրում դասերի ուղեցույց: Մեզ ոգևորում էր հատկապես այն հանգամանքը, որ մեխանիկական հիշողության կարիք չկար: Մենք ինքնուրույն բացահայտման և հայտնագործությունների ճանապարհով կազմեցինք դասաշար և սկսեցինք մշակել ուսումնական նյութերը:

Շեշտադրվեց կրթության եռաստիճան իրականացում.

- Ինչ գիտելիքներ են ձեռք բերելու աշակերտները տվյալ թեմայի ընթացքում
- Ինչ կարողություններ ու հմտություններ է ձևավորվելու նրանց մոտ
- Ինչպիսի վերաբերմունք է ձևավորվելու շրջապատող բնության նկատմամբ

Կարևոր է, որ յուրաքանչյուր աշակերտ լինի ոչ միայն հասարակ դիտող, այլև դրսևորի առավել ինքնուրույնություն և ստեղծագործական ակտիվություն, ուշադիր հետևի էքսկուրսավարի պատմելուն և մասնագետի աշխատանքին:

Այդ նպատակով օգտակար է նախապես աշակերտներին տալ հարցեր և առաջադրանքներ, որին նրանք պետք է մանրամասն պատասխանեն էքսկուրսիայից հետո:

Նախագծային մեթոդը զարգացնում է սովորողի ինտելեկտը, պլանավորելու կարողությունը, նախաձեռնողականությունը, ստեղծարարությունը: Աշակերտը սովորում է վերլուծել, կանխատեսել, աշխատել գաղափարի շուրջը: Ուսուցիչն էլ այս դեպքում պարզ գիտելիք փոխանցողից դառնում է տարբերակներ ու գաղափարներ մշակող, համակարգող, փորձագետ, խորհրդատու:

Աշխատանքի ընթացքում աշակերտները ծանոթացան շրջակա միջավայրի, բնության զարմանահրաշ տարրերի հետ :

Աշխատանքների կատարումը աշակերտների մոտ զարգացնում է պատասխանատվության զգացում, հոգատար վերաբերմունք բնության հանդեպ, հարգանք աշխատանքի հանդեպ: Ինչպես նաև միացնում է աշակերտներին կոլեկտիվներում, ովքեր կապված են իրար միասնական հետաքրքրություններով և ովքեր դաստիրակվում են ընկերասիրական ոգով:

Աշակերտները մեծ տպավորություններով են վերադառնում տուն: Էքսկուրսիայի տպավորությունների մասին կազմվեց գրքույկներ, պատի թերթ:

Մեր տպավորությունները.

- Միտք սերմանելը նույնն է, թե ծառ տնկես:
- Եկեք երկրում կատարվելիք փոփոխություններին զուգընթաց, մեկական ծառ ավելացնենք արդեն եղածին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կրթությունը գիտելիքների քանակը չէ, այլ լիակատար ըմբռնումն ու հմուտ կիրառումն այն ամենի, ինչ գիտես:

«Կենսաբանություն» առարկան միտված է կենսաբանությանը առնչվող հետաքրքիր և հարուստ ուսումնառության փորձառություն ապահովելու միջոցով սովորողների մոտ ձևավորել գիտական գրագիտություն և առողջ ապրելակերպ: Կենսաբանության մեջ սա արտահայտվում է աշակերտների մեջ բնության հանդեպ հոգատարության և սիրո ձևավորման, պահպանման, բնության անգնահատելի դերի գիտակցման ու արժևորման սերմանումով: Աշակերտները պետք է գիտակցեն, որ բնության մաքրությունը պահպանելով, նոր ծառեր տնկելով, մշակելով, յուրաքանչյուր կենդանի էակի կարևորությունը բնության մեջ գիտակցելով կերտում են սեփական տեսակն ու բնավորությունը, բարոյական գծերը, հասարակության համար պիտանի մարդ լինելը:

Հետազոտության ժամանակ, դասի ընթացքում, առաջադրել եմ հետազոտական հարցադրումներ, մեթոդներ և վարկածներ: Աշակերտները վեր են լուծել հետազոտության արդյունքում ստացված տվյալները առկա գիտելիքի և պատկերացումների համատեքստում, կատարել են ընդհանրացումներ, կիրառել համալիր գիտելիքը և անհրաժեշտ հմտությունները:

Ամփոփելով արդյունքները նշեմ, որ արտադասարանական աշխատանքները շատ առավելություններ ունի դասի համեմատությամբ: Արտադասարանական աշխատանքների կազմակերպումը ներառում է հզոր մետաճանաչողական բնութագրիչներ, ինչպիսիք են պլանավորումը, կառավարումը և մտորումները: Աշակերտները կառուցում են իրենց ճանաչողական կառույցները և հմտությունները խոսելու, բացատրելու, բանակցելու, վիճարկելու և հարցեր տալու միջոցով: Աշակերտների գործողությունները դիտարկվում են որպես աշակերտակենտրոն ակտիվ չափանիշ, անկախ այն բանից, թե ինչ է մտածում աշակերտը, երբ աշխատում է:

Այսօր ազգային դպրոցի վերակառուցման շրջանում ուսուցչի առաջավոր փորձի ուսումնասիրությունը և տարածումը մանկավարժական գիտության առաջնահերթ խնդիր-

ներից մեկն է: Առաջավոր փորձի տակ հասկանում ենք ուսուցչի բարձր վարպետությունը, այնպիսի պրակտիկա, որը տալիս է մանկավարժական բարձր արդյունք:

Պետք է ընդունել, որ, վերջին տարիներին, դպրոցականների կենսաբանության գիտելիքների մակարդակը զգալիորեն նվազել է: Սովորողների մեջ քիչ չեն այնպիսիք, ովքեր չեն կարողանում լուծել ստանդարտ խնդիրներ:

Նեգատիվ փոփոխությունների պատճառները, որոնք ի հայտ են եկել կենսաբանության ուսուցման վերջին տարիներին հայտնի են: Դա առաջին հերթին ուսումնական ծրագրի բարդացումն է, այն յուրացնելու ուսումնական ժամաքանակի կրճատումը, կենսաբանության լաբորատորիայի ոչ լիարժեք հագեցվածությունը : Դպրոցը լուրջ անելիքներ ունի լաբորատոր- գործնական աշխատանքների ուղղությամբ: Նյութերի և սարքավորումների անբավարար քանակի պատճառով լաբորատոր աշխատանքները կատարվում են միայն ցուցադրական սեղանի վրա, իսկ դա նշանակում է կրճատվում է աշակերտների ինքնուրույն աշխատանքների քանակը, հետևաբար ավելի քիչ ուշադրություն է դարձրվում աշակերտի կողմից նյութի յուրացմանն ու ամրապնդմանը:

Աշակերտների հետաքրքրության պակասը կենսաբանության առարկայի նկատմամբ բացատրվում է նաև արտադասարանական աշխատանքների պակասով:

Դրա համար անհրաժեշտ է եղավ լուծել հետևյալ խնդիրների շարքը .

- ✓ Ուսումնասիրել մանկավարժական, հոգեբանական, մեթոդական գրականություն՝ կենսաբանության արտադասարանական աշխատանքների կազմակերպման և դրվածքի մասին:
- ✓ Մշակել արտադասարանական աշխատանքների կազմակերպման և անցկացման մեթոդիկա:
- ✓ Առաջարկված մշակումները ստուգել փորձի ճանապարհով:

Ընդհանրացնելով առաջավոր ուսուցիչների փորձը, արտադասարանական պարապմունքները կարելի է պատկերացնել համակարգի տեսքով, որը կազմված է առանձին օրգաններից: Արտադասարանական աշխատանքում թեմատիկան շատ տարբեր է, կարևորը բովանդակությունն է, որը ենթարկվում է խիստ կոնկրետ պահանջների.

- գիտականություն,
- հասանելիություն,
- ակտուալություն,
- գործնական նշանակություն,
- հետաքրքրաշարժություն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ա. Հովհաննիսյան և ուրիշներ , Համագործակցային ուսուցում , Անտարես, 2006թ.
2. Գ. Ի. Շչուկինա, Մանկավարժություն, Երևան, 1969 թ.,
3. Համացանցային կայքեր